ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Մ. Բորզուի,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի ասպիրանտ

Հետևյալ հետազոտության նպատակը Չահարմահալ և Բախտիար նահանգի միջնակարգ դպրոցներում կրթական-տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման խոչընդոտների բացահայտումն է:

Տեղեկատվական տեխնոլոգիան՝ որպես տեղեկատվական հասարակության հիմք, համակարգչի, հաղորդակցության ուղիների զարգացման և տեղեկատվության կիրառման օրեցօր ավելացող կարիքների արդյունքն է: Երկրների մեծ մասի զարգացման ծրագրերի հետ կապված ուսումնասիրությունները ցույց են տալիս այս ծրագրերի առանցքում տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցության դերը: Տեխնոլոգիաների և դրա բաղադրիչների վերաբերյալ հստակ սահմանումը հանդիպում է դժվարությունների: Նրա վերաբերյալ կան շատ սահմանումներ, որոնցից որոշ մասը ստորև կներկայացվեն.

ա) Տեղեկատվական տեխնոլոգիան հաղորդակցության ձեռք բերումներից է և կապված է համակարգչային գիտելիքից օգտվելու և նրա հետ կապված խնդիրների լուծման մեթոդների հետ:

բ) Տեղեկատվական տեխնոլոգիաները բաղկացած են տեղեկատվության ստեղծման, կուտակման, տեղափոխման և օգտագործման բոլոր տեսակի տեխնոլոգիաներից:

գ) Տեղեկատվական տեխնոլոգիան տեխնոլոգիաների մի ճյուղ է, որը, օգտագործելով համակարգչային սարքավորումները, ծրագրերը և համացանցը, ուսումնասիրում և կիրառում է տվյալները, ինչպես նաև դրանք հանձնում կուտակման, կառավարման, մանիպուլիացիայի, տեղափոխման, փոխարկման, հսկողության և ավտոմատիզացիայի ասպարեզ:

Հստակ սահմանում չունի նաև տեղեկատվական հասարակությունը: Նրա ամենատարածված սահմանումը շեշտում է տեխնոլոգիաների ակնառու նորամուծությունները և տարբեր հասարակական ոլորտներում տեղեկատվության ստեղծման, կուտակման և տեղափոխման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը: Այսպիսի հասարակության առանցքը տեղեկատվության

և տեղեկատվական արժեքների ստեղծումն է նյութականի փոխարեն:

Ներկա դարաշրջանում տեխնոլոգիաների և գիտության զարգացումը այնպիսին է, որ կարճ ժամանակահատվածում տեղեկատվության մեծ քանակը արագորեն տարածվում ու զարգանում է հասարակության մեջ: Ակնհայտ է, որ այսպիսի զարգացումներով կրթությունը չի կարող իր նախկին դանդաղ տեմպերով առաջ գնալ: Այսօր այլևս ուսուցման ավանդական ձևերը և կրթության հին կարգերը ի վիճակի չեն պատասխանել գիտության զարգացումից առաջացած անսահմանափակ հարցերին, և կրթական տեխնոլոգիաները հստակ ծրագրի և մեթոդի կիրառմամբ կարող են լուծել այդ դժվարությունները: Կրթական տեխնոլոգիաները, եթե ճիշտ օգտագործվեն, ապա կրթության համար մեծ հնարավորություններ կստեղծվի, որպեսզի ուսուցման տեսակները զարգանան:

Կրթական տեխնոլոգիաները կազմված են նախագծումից, կրթության և ուսուցման ամբողջ ընթացքի համակարգումից և կատարումից, ավելի հստակ նպատակների սահմանումից, ուսուցման ասպարեզում փորձերի և հասարակական աղբյուրների կիրառումից, որոնք օգտագործվում են ավելի ազդեցիկ, ավելի խոր ու հստակ ուսուցման նպատակով (Ահդիան, 1374թ., էջ 13):

Ֆերդանեշը (1385թ.) կրթական տեխնոլոգիան մասնագիտական մի այնպիսի ճյուղ է համարում, որն ընդգրկում է այն բոլոր միջոցները, գործիքները և մեդիաները, որոնք հեշտացնում են կրթության և ուսուցման ընթացքը: Այս բաղկացուցիչները հնչունային և պատկերային նոր մեդիաներն են, որոնք օգտագործվում են կրթության և ուսուցման ասպարեզում:

Ծրագրերի բաղկացուցիչ տարրը կապված է կրթական միջոցների, դրանց նախագծման և ծրագրավորման մեթոդների հետ: Այս առումով կրթական տեխնոլոգիաները մեթոդների և գործընթացների մի հավաքածու են, որոնք կիրառվում են կրթության ծրագրավորման, կատարման և գնահատման համար: Իրականում այս բաղադրիչը կազմում է կրթական տեխնոլոգիաների տեսական հիմքը, որը ցույց է տալիս ուսուցանման սիստեմատիկ բնույթը և գտնվում է սարքավորումների բաղադրիչի հիմքում: Վերջինս սիստեմատիկ տեսանկյունով վերլուծում է կրթական ծրագրերը և լուծում բոլոր դժվարությունները: Այս տեսանկյունից, եթե կրթական համակարգում դժվարություն առաջանա, ապա այս ասպարեզի պատասխանատուները կարող են, օգտվելով սիստեմատիկ բնույթից, ձեռնամուխ լինել այդ դժվարությունների բացահայտմանը ու հաղթահարմանը:

Ակնհայտ է, որ կրթական տեխնոլոգիան կարող է ուսուցանման պրոցեսը հեշտացնել և կրթական ծրագրերի առումով օգտակար արդյունքներ ունենալ, սակայն, ցավոք, կրթական նոր տեխնոլոգիաների կիրառումը կարող է իր հետ բերել նաև դժվարություններ: Այս խնդիրը նկարագրված է Աբասիի (1370թ.), Մոշայեխիի (1372թ.), Վաշխանի Ֆարահանիի(1373թ.) ուսումնասիրություններում, և նրանք՝ որպես այդպիսի դժվարություններ, նշում են մասնավորապես հանրային աղբյուրների, սարքավորումների և հնարավորությունների պակասը և կրթական ծրագրի նախագծումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցանման ընթացքի վրա կարող է արդյունավետ ազդեցություն ունենալ՝ ներկայիս հետազոտությունը նվիրված է Չահարմահալ և Բախտիար նահանգի միջնակարգ դպրոցներում կրթական-տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման խոչընդոտների բացահայտմանը:

Հետազոտողները ուսումնասիրել են ուսուցիչների տեսակետները Չահարմահալ և Բախտիար նահանգի միջնակարգ դպրոցներում կրթական-տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման խոչընդոտների բացահայտման համար:

Ըստ ուսուցիչների՝ այնպիսի հարցեր, ինչպիսիք են ֆինանսական հնարավորությունների պակասը, հատկացված բյուջեի սահմանափակությունը, սարքավորումների թանկությունը և դրանց գնման համար դպրոցների ֆինանսական հնարավորությունների բացակայությունը, կրթական տեխնոլոգիաներով դպրոցների հագեցման համար ֆինանսական պատասխանատուների բավարար ուշադրության բացակայությունը, դպրոցների բյուջեի և սարքավորումների նկատմամբ նրանց կարիքների անհամապատասխան լինելը կրթական տեխնոլոգիաների կիրառման արգելքներից են համարվում:

Ստացված արդյունքները, մասնավորապես՝ ուսուցիչների տեսակետի, հմտության, գիտելիքի և իրազեկության վերաբերյալ, ցույց տվեցին, որ վերոհիշյալ գործոնը միջնակարգ դպրոցներում կրթական տեխնոլոգիաների կիրառման վրա ազդեցություն չի ունեցել: Մյուս կողմից, ուսուցիչները համոզված են, որ իրենք բավարար հմտություն ու իրազեկություն ունեն կրթական տեխնոլոգիաների կիրառման համար, և նրանք ցանկություն ունեն այդ տեխնոլոգիաները օգտագործել: Ուստի ուսուցիչները համոզված են, որ ուրիշ գործոնների պատճառով է, որ կրթական տեխնոլոգիաները միջնակարգ դպրոցներում չեն կիրառվում: Կատարված ուսումնասիրության ժամանակ ուսուցիչները համոզվեցին, որ ուղեցույցի բացակայությունը և դպրոցներում կրթական տեխնոլոգիաների

մասնագետների բացակայությունը կարող է կրթական տեխնոլոգիաներից օգտվելու արգելքներից մեկը լինել:

Մյուս կողմից, ըստ ուսուցիչների՝ այնպիսի հարցեր, ինչպիսիք են ֆինանսական հնարավորությունների պակասը, հատկացված բյուջեի սահմանափակությունը, սարքավորումների թանկ լինելը և դպրոցների կողմից այդ սարքավորումների գնման համար ֆինանսական հնարավորության բացակայությունը, կրթական տեխնոլոգիաներով դպրոցների հագեցման նպատակով ֆինանսական պատասխանատուների բավարար ուշադրության բացակայությունը և դպրոցների բյուջեի և կրթական տեխնոլոգիաներով նրանց հագեցման անհամապատասխանությունը գործոններ են, որոնք խանգարում են, որպեսզի դպրոցներում կրթական տեխնոլոգիաները կիրառվեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Coole N., (2008թ.), Teachers for tomorrows schools in educational evaluation,vol 10, 322-331

2. Berchal R., 2000, Instructional media and technology, New York, Rinehard and Winston

3. Nieo S., Nieo B., 2004, A case study of the development of the 1994 definitional technology. Educational media and technology year book, 30,2-17

4. Lashle R. & Rozan B., 2005, A case study of the development of the 1994 definitional technology. Educational media and technology year book, 30, 2-17

5. Rowland G., 1993, designing and instruction design, Journal of educational technology research and development, 41, 1, 79-91

6. Vockell E., Schwarts E., 2002, The computer in the classroom. Mitchell publishing